

**«2017Թ. ՀՀ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀԱՇՎԱՊԱՀ» ՄՐՑՈՒՅԹԻ 8-ՐԴ ՄՐՑԱՇԱՐԻ
I ԸՆՏՐԱԿԱՆ ՓՈՒԼ¹**

«2017թ. լավագույն հաշվապահ» անվանակարգում հայտարարված մրցույթի 8-րդ շրջանի առաջին փուլին ներկայացվում է մեկ հարցաշարեր և խնդիր:

Հարցաշարը բաղկացած է 10 հարցից: Յուրաքանչյուր հարցի ճիշտ պատասխան գնահատվում է 2 միավոր, իսկ սխալ պատասխանը՝ 0 միավոր: Հարցաշարի բոլոր հարցերի ճիշտ պատասխանի դեպքում մասնակիցը կստանա ընդհանուր հաշվով 20 միավոր:

Խնդիրը բաղկացած է 2 հարցից, որի ճիշտ պատասխանը գնահատվում է 5 միավոր, սխալ պատասխանը՝ 0 միավոր:

Հարցաշարի և խնդրի ընդհանուր միավորների թիվը կազմում է 30 միավոր:

Ստորև ներկայացվող հարցաշարի և խնդրի պատասխաններն ուղարկել press@gortsq.am էլեկտրոնային հասցեին մինչև 2017 թվականի ապրիլի 9-ը: Հարցաշարի և խնդրի ճիշտ պատասխանները կտեղադրվեն www.gortsq.am կայքէջում՝ 2017 թվականի ապրիլի 10-ին:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ – Մրցանակաբաշխությունը, պատվոգիրը, հաշվապահական հաշվառման միջազգային խորհրդանիշով ոսկեպատ շքանշանը, հուշանվերը և վկայական հանձնելու արարողությունը տեղի կունենա 2018 թվականի փետրվարին՝ Ծաղկածորում:

**«2017Թ. ՀՀ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀԱՇՎԱՊԱՀ» ՄՐՑՈՒՅԹԻ 8-ՐԴ ՄՐՑԱՇԱՐԻ
I ԸՆՏՐԱԿԱՆ ՓՈՒԼԻ ՀԱՐՑԱՇԱՐԸ**

1. Եթե որևէ կազմակերպություն ՀՀ կառավարության հավանությանն արժանացած ծրագիր իրականացնող ռեզիդենտ շահութահարկ վճարող է և ԵՏՄ անդամ չհամարվող պետություններից ՀՀ տարածք ապրանքներ է ներմուծում, նշված գործարքներից, ո՞ր դեպքում է ԱԱՀ-ից ազատվում՝

ա) եթե այդ ապրանքները կամ դրանց վերամշակման արդյունքում ստացված ապրանքները ներմուծման օրվանը հաջորդող 180 օրվա ընթացքում արտահանվում են (բացառապես ԵՏՄ անդամ պետություններ).

բ) եթե այդ ապրանքները կամ դրանց վերամշակման արդյունքում ստացված ապրանքները ներմուծման օրվանը հաջորդող 365 օրվա ընթացքում արտահանվում են (բացառապես ԵՏՄ անդամ պետություններ).

+գ) եթե այդ ապրանքները կամ դրանց վերամշակման արդյունքում ստացված ապրանքները ներմուծման օրվանը հաջորդող 180 օրվա ընթացքում արտահանվում են (այդ թվում՝ ԵՏՄ անդամ պետություններ).

դ) եթե այդ ապրանքները կամ դրանց վերամշակման արդյունքում ստացված ապրանքները ներմուծման օրվանը հաջորդող 365 օրվա ընթացքում արտահանվում են (այդ թվում՝ ԵՏՄ անդամ պետություններ).

2. Ե՞րբ է շահաբաժինների տեսքով եկամտի ստացման իրավունքը համարվում ձեռք բերված՝

¹ «2017թ. լավագույն հաշվապահ» մրցույթին ներկայացվող առաջադրանքները, խնդիրները և հարցաշարերը մշակվում, դրանց պատասխանները գնահատվում են «Գործք» ամսագրի գլխավոր խմբագրի հրամանով ստեղծված հանձնաժողովը, որի անդամ են հանդիսանում ՀՀ հարկային և աշխատանքային օրենսդրությունների, բիզնես հոգեբանության, Հայաստանի ամենաիեղինակավոր և վաստակաշատ գիտնականները, պետական կառավարման մարմինների լավագույն մասնագետները:

- ա) հաշվետու՝ տարվա գործունեության արդյունքներով ստացված շահույթից շահաբաժինների բաշխման մասին որոշման ընդունման օրը, բայց ոչ ուշ, քան հաշվետու տարվան հաջորդող հարկային տարվա ապրիլի 25-ը ներառյալ.
- բ) հաշվետու տարվա գործունեության արդյունքներով ստացված շահույթից շահաբաժինների բաշխման մասին որոշման ընդունման օրը, բայց ոչ ուշ, քան հաշվետու տարվան հաջորդող հարկային տարվա մայիս 1-ը ներառյալ.
- գ) հաշվետու տարվա գործունեության արդյունքներով ստացված շահույթից անկախ բաժնետերերի որոշում կայացնելու պայմանից, բայց ոչ ուշ, քան հաշվետու տարվան հաջորդող հարկային տարվա ապրիլի 25-ը ներառյալ.
- դ) բաժնետերերի ժողովի կողմից հաշվետու տարվա գործունեության արդյունքներով ստացված շահույթից շահաբաժինների բաշխման մասին որոշման ընդունման օրը, բայց ոչ ուշ, քան հաշվետու տարվան հաջորդող հարկային տարվա հունիսի 30-ը ներառյալ:

3. Ո՞ր չափանիշն է պարտադիր պահուստի ճանաչման համար՝

- +ա) Ներկա պարտականության առկայությունը՝ որպես անցյալ դեպքերի արդյունք
- բ) Անբարենպաստ ֆինանսական գործիքի առկայությունը.
- գ) Պահուստ կարող է ճանաչվել կազմակերպության ընդհանուր ժողովի վորոշման:

4. Երբ ծառայությունների մատուցման գործարքի արդյունքը հնարավոր է արժանահավատորեն գնահատել, գործարքից հասույթը պետք է ճանաչվի՝

- ա) կողմերի միջև կնքված գրավոր պայամանագրի համաձայն.
- +բ) հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործարքի ավարտվածության աստիճանի հիման վրա.
- գ) անկախ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործարքի ավարտվածության աստիճանի մակարդակի:

5. Նշված ակտիվներից որը չի դասակարգվի որպես պաշար.

- ա) անավարտ արտադրանքը, որը նախատեսվում է ավարտուն վիճակի հասցնել հաշվետու ամսաթվից հետո ավելի քան մեկ տարվա ընթացքում.
- բ) այն ակտիվները, որոնք արտահայտված են նյութերի և արագամաշ առարկաների ձևով արտադրանքի թողարկման կամ ծառայություններ մատուցելու ընթացքում օգտագործելու համար.
- +գ) այն առարկաները, որոնց գումարը էական չէ և որոնք նախատեսվում է օգտագործել ավելի քան մեկ տարվա ընթացքում.
- դ) այն ակտիվները, որոնք պահվում են սովորական գործունեության ընթացքում վաճառքի համար:

6. Հարկվող շահույթը որոշելիս հիմնական միջոցների վերագնահատման արդյունքները.

- ա) բոլոր դեպքերում հաշվի են առնվում.
- +բ) հաշվի են առնվում միայն օրենքով սահմանված կարգով իրականացված վերագնահատման դեպքում.
- գ) հաշվի չեն առնվում:

7. Երբ ծառայության մատուցման արդյունքը հնարավոր չէ արժանահավատորեն չափել, ապա հասույթ՝

- ա) չպետք է ճանաչվի.

- բ) պետք է ճանաչվի.
- +գ) պետք է ճանաչվի միայն ճանաչված այն ծախսերի չափով, որոնք կփոխհատուցվեն.
- դ) պետք է ճանաչվի կատարված բոլոր ծախսերի չափով, եթե նույնիսկ հավանական է, որ դրանց որոշ մասը չի փոխհատուցվի:

8. Կազմակերպության կողմից տրամադրված երկարաժամկետ փոխառությունների գծով չվաստակած ֆինանսական եկամտի արտացոլում.

- ա) Դեբետ 342 «Նախորդ տարիների չբաշխված շահույթ (չծածկված վնաս)»
Կրեդիտ 147 «Չվաստակած ֆինանսական եկամուտ ամորտիզացված արժեքով հաշվառվող երկարաժամկետ ֆինանսական ակտիվների գծով».
- +բ) Դեբետ 145 «Տրամադրված երկարաժամկետ փոխառությունների գծով ստացվելիք համախառն մուտքեր»
Կրեդիտ 147 «Չվաստակած ֆինանսական եկամուտ ամորտիզացված արժեքով հաշվառվող երկարաժամկետ ֆինանսական ակտիվների գծով».
- գ) Դեբետ 147 «Չվաստակած ֆինանսական եկամուտ ամորտիզացված արժեքով հաշվառվող երկարաժամկետ ֆինանսական ակտիվների գծով».
Կրեդիտ 145 «Տրամադրված երկարաժամկետ փոխառությունների գծով ստացվելիք համախառն մուտքեր»:

9. Հաշվետու ժամանակաշրջանի վերջում վարչական ծախսերի դուրսգրման արտացոլում.

- ա) Դեբետ 813 «Անուղղակի արտադրական ծախսումներ»
Կրեդիտ 713 «Վարչական ծախսեր».
- +բ) Դեբետ 331 «Ֆինանսական արդյունք»
Կրեդիտ 713 «Վարչական ծախսեր».
- գ) Դեբետ 215 «Արտադրանք»
Կրեդիտ 713 «Վարչական ծախսեր»:

10. Հաշվանցմամբ մարվում է կապալառուների պարտքը՝ նրանց վաճառված ոչ նյութական ակտիվների դիմաց դեբիտորական պարտքով.

- ա) Դեբետ 222 «Դեբիտորական պարտքեր այլ եկամուտների գծով»
Կրեդիտ 521 «Կրեդիտորական պարտքեր գնումների գծով».
- բ) Դեբետ 221 «Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով»
Կրեդիտ 521 «Կրեդիտորական պարտքեր գնումների գծով».
- +գ) Դեբետ 521 «Կրեդիտորական պարտքեր գնումների գծով»
Կրեդիտ 221 «Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով»:

**«2017Թ. ՀՀ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀԱՇՎԱՊԱՀ» ՄՐՑՈՒՅԹԻ 8-ՐԴ ՄՐՑԱՇԱՐԻ
I ԸՆՏՐԱԿԱՆ ՓՈՒԼԻ ԽՆԴԻՐԸ՝ ՊԱՏԱՍԽԱՆՈՎ**

ՀՀ ռեզիդենտ «ԱԲՖ ՍԵՐՎԻՍ» ՓԲԸ-ն զբաղվում է սարքավորումների ներմուծմամբ ՀՀ տարածք և վաճառքով: Ընկերությունը 2015թ.-ին որոշել է ընդլայնվել և ներմուծել նաև յուղեր: Ընկերությունը գտնվում է հարկման ընդհանուր դաշտում: Ընկերությունը հիմնադրվել է 2011թ.-ին: 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ նախորդ տարիներից փոխանցվող հարկային վնասը կազմել է 4,300 հազ. դրամ, որը փոխանցվում է հիմնադրման հաջորդող տարվանից: Հաշվետու տարվա արդյունքներով Ընկերության զուտ ակտիվների արժեքը (հարկման նպատակով) կազմել է 15,840 հազ.դրամ:

Ընկերության հաշվապահական հաշվառման համակարգում 2015թ.դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա է հետևյալ տեղեկատվությունը՝

Չագ. դրամ

	Եկամուտներ	Գումարը
1.	ՀՀ տարածք ներմուծված ապրանքների վաճառքից հասույթ (առանց անուղղակի հարկերի)	1,150,000
2.	Հիմնական միջոցների վերագնահատումից եկամուտ	20,000
3.	Ընկերության աշխատակցին տրամադրված փոխառությունից տոկոսային եկամուտ	800
4.	Հիմնական միջոցների օտարումից հասույթ	14,000
	Ընդամենը եկամուտներ	1,184,800

Չագ. դրամ

	Նվազեցումներ	Գումարը
1.	Իրացված ապրանքների ինքնարժեքը	850,000
2.	Աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված այլ վճարումները	32,200
3.	Վարձակալված խանութ սրահի (24,000 հազ. դրամ կադաստրային արժեքով) տարեկան վարձավճար	800
4.	Բանկից ստացված վարկի տոկոսային ծախս (հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքով)	18,000
5.	Պարտքի մարման ժամկետի 366 օրը լրացած առևտրային դեբիտորական պարտքերի դուրսագրում, «Ա» ՍՊԸ՝ 210,000 դրամ, որի գծով նախորդ տարում շահութահարկի հաշվարկման նպատակով պահուստ էր ստեղծվել 75% չափով	240
6.	Գործուղման օրապահիկի ծախսեր, որոնք կատարվել են (վճարվել են) հարկային տարվա ընթացքում՝ Ընկերության աշխատողներին՝ ՀՀ տարածքում ընդհանուր առմամբ 15 օր գործուղման մեջ գտնվելու համար (5 օր x 15,000 դրամ և 10 օր x 8,000 դրամ)	155
7.	Օտարված հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքի ծախսագրում	9,000
8.	Հիմնական միջոցների ամորտիզացիոն մասհանումներ	18,700
	Ընդամենը նվազեցումներ	929,095

Լրացուցիչ տեղեկատվություն

1. 2015թ. մարտի 10-ին առաջին անգամ Ընկերությունը «Բաց թողնում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով Բելոռուսի Հանրապետությունից ՀՀ տարածք է ներմուծել վերավաճառքի համար նախատեսված ապրանքներ, որոնց սեփականության իրավունքը (համաձայն մատակարարման պայմանագրի) Ընկերությանն է անցել 2015թ. Ապրիլի 1-ին: Ներմուծված ապրանքների պայմանագրային արժեքը կազմել է՝ 1,650 հազ. ռուսական RUB*² Դրանց տեղափոխման համար Ընկերությունը կատարել է 4,400 հազ. դրամի ծախս, որից մինչև ՀՀ պետական սահմանը ապրանքների փոխադրման համար կատարված ծախսը կազմել է 3,700 հազ. դրամ: Ընկերությունը ապրանքների ներմուծման հետ կապված կատարել է նաև հետևյալ ծախսերը՝ բնապահպանական վճարներ՝ 700 հազ. դրամ, ապահովագրական վճարներ՝ 5 հազ. դրամ: Ներմուծված ապրանքների համար հաշվարկված ակցիզային հարկը կազմել է 4,100 հազ. դրամ: Ներմուծված ապրանքները ամբողջությամբ վաճառվել են ընթացիկ տարում՝ 30,000 հազ. դրամով (առանց ԱԱՀ), սակայն վաճառքի գործարքի գծով հաշվապահական ձևակերպումներ դեռևս

² ՀՀ արտարժույթային շուկաներում մեկ RUB-ի նկատմամբ հայկական դրամի միջին փոխարժեքը կազմել է՝ 2015թ. մարտի 10-ին՝ 7 դրամ, 2015թ. ապրիլի 1-ին՝ 8 դրամ

Ընկերության հաշվապահի կողմից չեն կատարվել: Ընկերության կողմից սույն գործարքի համար օրենքով նախատեսված կարգով ներկայացվել է ներմուծման հարկային հայտարարագիր, և վճարվել են առաջացած բոլոր հարկերն ու այլ պարտադիր վճարները:

Պահանջվում է Համապատասխան հաշվարկների հիման վրա որոշել Ընկերության 2015 թվականի հարկվող շահույթը (վնասը) և հաշվարկել շահութահարկի գումարը:

ԱՈՒՋԻՆ ՓՈՒԼԻ ԽՆԴՐԻ ՊԱՏԱՍԽԱՆ

	Եկամուտներ	Եկամուտ հաշվ.	Եկամուտ հարկային
1.	ՀՀ տարածք ներմուծված ապրանքների վաճառքից հասույթ (առանց անուղղակի հարկերի)	1,150,000	1,180,000
2.	Հիմնական միջոցների վերագնահատումից եկամուտ	20,000	-
3.	Ընկերության աշխատակցին տրամադրված փոխառությունից տոկոսային եկամուտ	800	800
4.	Հիմնական միջոցների օտարումից հասույթ	14,000	14,000
	Ընդամենը եկամուտներ	1,184,800	1,194,800

	Նվազեցումներ	Ծախսեր հաշվ.	Ծախսեր հարկային
1.	Իրացված ապրանքների ինքնարժեքը	850,000	888,433
2.	Աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված այլ վճարումները	32,200	32,200
3.	Վարձակալված խանութ սրահի (24,000 հազ. դրամ կադաստրային արժեքով) տարեկան վարձավճար,	800	1,200
4.	Բանկից ստացված վարկի տոկոսային ծախս (հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքով)	18,000	18,000
5.	Պարտքի մարման ժամկետի 366 օրը լրացած առևտրային դեբիտորական պարտքերի դուրսգրում, “Ա” ՍՊԸ՝ 210,000 դրամ, որի գծով նախորդ տարում շահութահարկի հաշվարկման նպատակով պահուստ էր ստեղծվել 75% չափով	240	-
6.	Գործուղման օրապահիկի ծախսեր, որոնք կատարվել են (վճարվել են) հարկային տարվա ընթացքում՝ Ընկերության աշխատողներին՝ ՀՀ տարածքում ընդհանուր առմամբ 15 օր գործուղման մեջ գտնվելու համար (5 օր x 15,000 դրամ և 10 օր x 8,000 դրամ)	155	120
7.	Օտարված հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքի ծախսագրում	9,000	9,000
8.	Հիմնական միջոցների ամորտիզացիոն մասհանումներ	18,700	18,700
	Ընդամենը նվազեցումներ	929,095	967,653

2015թ. հարկվող շահույթը՝ $1,194,800 - 967,653 = 227,147$

2015թ. շահութահարկը՝ $(1,194,800 - 967,653) * 0.2 = 45,429$